ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

2022-2023
ուսումնական տարի

ՈՍԿԵՐԻՉ

ԽՈՀԱՐԱՐ

ՕՊԵՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ

ՌԱԴԻՈՄԵԽԱՆԻԿ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐ

ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՂ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


«ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐ» ... 3
«ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ» ... 5
«Ի ՀԻՇԱՏԱԿ ՆԱՀԱՏԱԿԱՑ» ... 7
«ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ» ... 9
«Ի ՀԻՇԱՏԱԿ ՆԱՀԱՏԱԿԱՑ» ... 12
«ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍ» ... 14
«ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ» ... 16
ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ՝ «ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ» ... 18
«ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ... 20
«ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲԱՆ ԽԱՉԵՐԹ» ... 22
«ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴԸ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ» ... 24
«ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ... 27
«ՎՈԼԵՅԲՈԼԻ ՆԵՐՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ» ... 35
«ԲԱՑ ԴԱՍ» ... 38
ԶԵԿՈՒՅՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ «ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ» ... 41
«ՄԻԱՍԻՆ»-Ի ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ... 44
«Ի՞ՆՉ , ՈՐՏԵ՞Ղ , Ե՞ՐԲ » ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ ... 46
«ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ» ... 48
«ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ» ... 50
«ՀԱՆԴԻՊՈՒՄ - ՔՆՆԱՐԿՈՒՄ» ... 52
«ԲԱՑ ԴԱՍ» ... 54
«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ-65» ... 57
«ԲԱՑ ԴԱՍ» ... 59
«ՋՅՈՒԴՈՅԻ ՀՀ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ» ... 62
«ՍԵՄԻՆԱՐ-ՊԱՐԱՊՄՈՒՆՔ» ... 63
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ» ... 65
«ՍԵՄԻՆԱՐ-ՊԱՐԱՊՄՈՒՆՔ» ... 67
«ԲԱՑ ԴԱՍ» ... 69
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ «ԱՄԱՆՈՐՅԱ ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ» ... 72
«ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԱՎԱՃԱՌ - ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՎԱՃԱՌՔ» ... 73
«ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ՄԵԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ... 76
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ-31» ... 78
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ «ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ» ... 81
«ԵՐԿՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ... 83
«ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՆԵՐՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ» ... 85
«ԲԱՑ ԴԱՍ» ... 88
ԷՔՍՊՈ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ «ՏԱՐՎԱ ԲԱՑՈՒՄ-2023» ... 96
«ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱԿԻՆ» ... 98
«ԶԵԿՈՒՅՑ» ... 99
«ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ» ... 101
«ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐՋԱՅՑ» ... 103
«ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՆԵՐԴԱՇՆԱԿ» ... 105
«ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐՋԱՅՑ» ... 107
«SHUTTLE» ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ... 109
«ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ» ... 111
«ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ» ... 113
«ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԵՐԻ ՇԱԲԱԹ» ... 115
«ԲԱՑ ԴԱՍ» ... 118
«ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ» ... 124
«ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ՄՐՑԱՇԱՐ» ... 126
«ՍԵՄԻՆԱՐ-ՊԱՐԱՊՄՈՒՆՔ» ... 128
«ՇԱԲԱԹՕՐՅԱԿ» ... 130
«ԲԱՑ ԴԱՍ» ... 132
«ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ» ... 135
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՈՀԱՐԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ» ... 136
«ԴԱՍ-ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ... 137
«ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍ» ... 140
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ... 142
«ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐՋԱՅՑ» ... 144
«ԲԱՑ ԴԱՍ» ... 146
«ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐՋԱՅՑ» ... 149
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ «ՎԵՐՋԻՆ ԴԱՍ» ... 151
«ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ... 155
«ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ... 157
«ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ» ... 164




## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՄԿՍԵԼՈՒ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է. . .

«Դեպի գիտելիքի աշխարհ մուտքն ազդարարող այս օրը բոլորիս տոնն է»՝բացման այս խոսքով դպրության օրվա մեկնարկն ազդարարեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Ք. Ահարոնյանը:

Տկն. Ահարոնյանն ուսանողներինն ծնողներին շնորհավորեց նոր ուսումնական տարվա կապակցությամբ, բոլորին մաղթեց մեծ հաջողություն և բեղմնավոր աշխատանք:
Բովանդակալից և հագեցած տեսանյութի միջոցով անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացրեց փոխտնօրեն Ա. Մկրտչյանը՝ արժևորելով 13-ամյա փառահեղ ուղի անցած կրթօջախի պատմությունը:
Փոխտնօրենը նշեց, որ. «Արհեստների և արվեստների քաղաքում իր առանձնահատուկ տեղն ունեցող կրթօջախը, հարուստ փորձով և գրագետ մանկավարժական համակազմով, մարզում առաջատարներից է, որը կրթել և դաստիարակել է հայրենասեր, խոհեմ և բանիմաց ուսանողներ»:
Ռազմահայրենասիրական ելույթով հանդես եկավ ՊՆ N զորամասի «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր կապիտան Էդգար Թաթևոսյանը՝ ոգեկոչելով ազգային բանակի ապագա զինվորներին և ներկա ուսանողներին:
Միջոցառումն առավել հետաքրքիր դարձավ, երբ 2021-2022 ուստարվա շրջանավարտներից մի քանիսը հանդես եկան իրենց ողջույնի խոսքով, ուսումնառած տարիների հմուտ փորձով և կարծիքներով:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում




### ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ STARMUS VI ՓԱՌԱՏՈՆԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՐԱՆՆԵՐԻՆ

2022թ-ի սեպտեմբերի 9-ին և 10-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի 23 ուսանողներ՝ դասախոս Հ.Մարմարյանի նախաձեռնությամբ, մասնակցեցին «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի» և Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի կողմից կազմակերպած սեմինարին, որի ընթացքում տեղի ունեցավ «Միջառարկայական երկխոսության ստեղծում գիտության և արվեստի բնագավառում» պանելային քննարկում: Այն առանձնահատուկ էր իր տեսակի մեջ, քանի որ ներառում էր «Կայուն բաղադրյալ նյութեր», «Սեննորային ճարտարագիտություն» և տարաբնույթ հետազոտական թեմաների վերաբերյալ հետաքրքրաշարժ նյութեր:

«Վիշապաքարի ուղերձը» խորագիրը կրող միջոցառումների շարքի մասնակիցներ iPod-ի հեղինակը, Iphone-ի համահեղինակը, Nest ընկերության հիմնադիրը և Future Shape ընկերության տնօրեն Էնթոնի ՛՛Թոնի՛՛ Ֆադելին և տիեզերագնաց ՛՛Ապոլոն 16՛՛-ի լուսնագնաց Չարլի Դյուքը ներկայացրին իրենց հաջողության գաղտնիքները՝ կարևորելով հետևյալ կարգախոսը.«Արվեստի և գիտության ոլորտներն ունեն մեկ հենք՝ ճանաչել և հայտնագործել»:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## «ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ»

Հայրենի երկրի սահմանները պաշտպանելիս 2020 թվականի հոկտեմբերին ընդհատվեց Արթուր Սուրենի Աթոյանի երկրային կյանքը, և նա դարձավ հավերժի ճամփորդ:

2022թվականի սեպտեմբերի 16-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» բաժնի շրջանավարտ Արթուր Աթոյանի ծննդյան օրվա առթիվ զինղեկ Ս.Կարապետյանի և ուսմասվար Ա.Մարգարյանի նախաձեռնությամբ ուսանողական խորհուրդը և դասախոսները այցելեցին Արթուրի խաչքար-հուշակոթողին:

Ծաղիկների խոնարհման, մոմավառության և խնկարկման պահին լուռ էին ներկաները, նրանց աչքերում արցունք կար, իսկ հայացքներում՝ ափսոսանք:

Ուսանողները բարձրաձայնեցին իրենց սրտի նվիրական խոսքը. «Շնորհավոր երկնային ծնունդդ սիրելի Արթուր: Չենք կարող ներկան համարել ճշմարտություն մեր սերնդակի՛ց ընկեր, հայրենիքի համար զոհեցիր ամենաթանկը՝ կյանքդ…

Դու՛ որ տարբերվող էիր քո տեսակով անմահ կմնա բոլորիս հուշերում: Ննջիր խաղաղությամբ քաջ հայորդի»:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորում թիվ 2 նիստում
«30» 08 2022թ.
Նախագահ՝ ________ Ռ. Գեւորգյան

**Ինտելեկտուալ խաղ՝ «Ի՞նչ», «Որտե՞ղ», «Ե՞րբ»**
**նվիրված 22 անկախությանը**

Անցկացման ամսաթիվը՝ 20.09.2022թ.
Նպատակը.

1. Նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը:
2. Զարգացնել ուսանողների թիմային աշխատանքը և արագ կողմնորոշվելու ունակությունը, բանավոր խոսքը:
3. Խթանել նոր գիտելիքների ձեռքբերումը:
4. Արժևորել անկախության գինը:
5. Կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

Վերջնարդյունք.

Սովորողը կկարողանա․
արագ կողմնորոշվել,
տրամաբանել,
մտածել,
վերլուծել,
ծավալվել սահմանված ժամանակամիջոցում,
արդյունավետ աշխատել թիմում
արժևորել անկախությունը:
Նախապատրաստական փուլ
Պատրաստել պաստառներ:
Ընտրել, մշակել, համակարգել ինտելեկտուալ խաղի հարցերը:
Պատրաստել մասնակցության հայտը և ձևավորել ժյուրիի կազմը:
Ձևավորել թիմեր՝ համապատասխանաբար առաջին, երկրորդ, երրորդ կուրսերից:

Ընթացքը.
*I մաս*
Հիմնական փուլ /խաղի անցկացում/

*II մաս*
Արդյունքների ամփոփում

Կազմակերպիչ՝ ________ Ռ. Գեւորգյան




## ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 20-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց ինտելեկտուալ խաղ՝ նվիրված ՀՀ անկախության օրվան: Ինտելեկտուալ խաղի նպատակն էր նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը, արժևորել անկախության դերը:

Խաղին մասնակցեցին ուսումնարանի առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի հավաքական թիմերը:

Մասնակիցները խաղի ընթացքում ցուցաբերեցին մեծ պատրաստակամություն, ոգևորություն, արագ կողմնորոշվելու և թիմում լիարժեք աշխատելու ունակություն, ակտիվ մրցակցություն:

Գովելի էր այն հանգամանքը, որ թիմերի կողմից տրված պատասխանները հիմնավորված էին և հարուստ՝ լրացուցիչ տեղեկատվությամբ:

Մինչ միավորների ամփոփումը, ընդմիջման ժամանակ, դահլիճում ներկա ուսանողներին, խաղավարի կողմից առաջադրվեցին տոնին նվիրված հայրենասիրական հարցեր: Արդյունքները գոհացնող էին. մեկ անգամ ևս փաստեցինք, որ կրթօջախում ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա են:

Վերջնարդյունքում՝ հաղթող ճանաչվեց երկրորդ կուրսերի հավաքական թիմը: Հաղթող թիմը պարգևատրվեց պատվոգրով:

Կազմակերպիչ՝ Ռ.Պետրոսյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## «20-րդ աշնան 21-րդ թախծալի օրը…»

2022 թվականի սեպտեմբերի 21-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհուրդը և դասախոսները, ուսմասվար Ա. Մարգարյանի և զինղեկ Ս. Կարապետյանի նախաձեռնությամբ, մասնակցեցին «Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» բաժնի շրջանավարտ Արթուր Արտյոմի Մխիթարյանի խաչքար-հուշակոթողի բացման արարողությանը՝ նվիրված նահատակված հերոսի 20-ամյա տարելիցին։

2022 թվականի հունվարի 11-ին՝ Վերին Շորժայի պաշտպանական մարտում, ընդհատվեց Արթուրի երկրային կյանքը, և նա դարձավ հավերժի ճամփորդ։ Որպես խոնարհումի առհավատչյա՝ ներկաները հարգանքի տուրք մատուցեցին հավերժացած ու հերոս դարձած կապուտաչյա Արթուրի հուշակոթողի և շիրիմի առջև։

Ծաղիկների խոնարհում, խնկարկման արարողություն, սերնդակից ընկերների աղոթք, արցունքոտ աչքեր, որդեկորույս մայրեր և սգացող հայրեր… և այս ամենը ՀՀ անկախության համայնապատկերին։ Երկնքում փողփողում էր հայոց եռագույնը, իսկ ներկաների հայացքներում կար կարոտի, ափսոսանքի ու սփոփանքի միաձույլ մի ստվեր, որ հուշում էր. «Լույսերի մեջ մնաք քաջեր… Դուք հավերժացաք, որ մենք՝ բոլորս, ապրենք։ Խոստանում ենք երբե՛ք չպարտվել, քանզի մենք հայ ենք։»

## Նկարադարան


Հայերեն | Français | English
ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐԻ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## «ՀԱՅՐԵՆԱՆՎԻՐՈՒՄԻ ԵՎ ՈԳՈՒ ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ »

Սեպտեմբերի 22-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհրդի առաջարկությամբ և զինղեկ Ս. Կարապետյանի նախաձեռնությամբ, ուսանողներից մի քանիսը այցելեցին Իջևանի թիվ N զորամասի մարտական դիրքեր։ Պատերազմական այս պատասխանատու օրերին, երբ վտանգված են հայրենի երկրի սահմանները, իսկ խաղաղությունն ապահովող զինծառայողներին անհրաժեշտ է նաև երիտասարդ սերնդակիցների գոտեպնդող, ոգեշնչող խոսքը, մեր հայրենասեր ուսանողները մարտական դիրքերում էին։ ՍԵՐ դեպի բանակը և հայրենիքը նրանց ենթագիտակցության մեջ էր, իսկ ռազմահայրենասիրական դաստիարակության ամենավառ դրսևորումներից մեկը բարի կամքի փոքր դրսևորումն էր՝ մեծ ցանկությամբ և ոգու արիությամբ։ Կրթօջախի բաց տղաներն իրենց աջակցությունն ունեցան զինծառայության համար անհրաժեշտ պարագաներ նվիրաբերելու հարցում, քանզի գիտակցում էին, որ էականը հայրենանվիրումն է։ Հանդիպումը տպավորիչ էր, իսկ բաժանումը հուսառատ…

Զինղեկ Ս. Կարապետյանն իր ուսանողներին դաստիարակում է Նժդեհական վեհ գաղափարախոսությամբ. «Փոքր ազգերը պարտադրօրէն աւելի հայրենասէր պիտ լինեն, քան մեծերը, մենք՝ աւելի քան բոլորը։ Հայրենապա՛շտ պիտի լինենք մենք։»

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ










## ՖԻԼՄԻ ԴԻՏՈՒՄ

2022 թվականի սեպտեմբերի 23-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Կորուսյալ հայրենիք» խորագրով ֆիլմի դիտում-քննարկում՝ հայոց պատմություն առարկայից՝ առաջին կուրսերի մասնակցությամբ:

Ֆիլմի դիտման նպատակն էր ուսանողներին ներկայացնել Արևմտյան Հայաստանի՝ Կարսի, Անիի, Իգդիրի, Բայազետի, Վանի, Բիթլիսի, Մուշի, Էրզրումի, Արդահանի և այլ քաղաքների պատմությունները, պատմամշակութային կոթողները, ներշնչել հավատ միացյալ հայրենիքի գաղափարի վերաբերյալ, որ հայն այլևս չի խորհելու. «Իմ որբացած, կորուսյալ հայրենիք, այլ հպարտ ասելու է՝ իմ ազատ ու անկախ Հայաստան»: Հայի գերագույն նպատակն է վառ պահել պատմական հիշողությունը, ճանաչել այն հայրենիքն ու փառահեղ մշակույթը, ուր մեր ժողովուրդն ապրել է հազարավոր տարիներ:

Ֆիլմի դիտման ավարտին ուսանողները հուզառատ էին. տեղի ունեցավ բուռն քննարկում, որի ընթացքում մասնակիցներն արտահայտեցին իրենց կարծիքները, առաջարկեցին լուծումներ՝ կորուսյալ հայրենիքը վերադարձնելու ակնկալիքով:

Քննարկումից հետո հայտարարվեց «Կորուսյալ հայրենիք» թեմայով ստեղծագործական շարադրությունների մրցույթ:

*Հումանիտար մեթոդմիավորում*
*Դասավանդող՝ Ա. Պետրոսյան*

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ







## Լուսաբանում




2022թ հոկտեմբերի 7-ին ամփոփվեցին «ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ» թեմայով ստեղծագործական շարադրությունների մրցույթի արդյունքները: Մրցույթը նպատակ ուներ անկոտրում պահել հայի ազգային ոգին և արժորել հայրենանվիրումի պատվարժան կոչումը:

«Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտության II կուրսի ուսանող Նարեկ Հակոբյանը զբաղեցրեց I տեղ՝ իր ինքնատիպ բանաստեղծությամբ, որտեղ արտացոլված էր կորուսյալ հայրենիքի վերածննդի անվերապահ հավատն ու հույսը:

«Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում՝ ռադիոմեխանիկ» մասնագիտության I կուրսի ուսանող Ռոբերտ Եղիազարյանը զբաղեցրեց II տեղ՝ իր բովանդակալից, գրագետ շարադրությամբ, որտեղ արտացոլված էր «կորուսյալ հայրենիքում» երբևէ ապրելու, արարելու երազանքը:

«Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտության I կուրսի ուսանող Սամվել Մուրադյան զբաղեցրեց III տեղ իր գաղափարային նոր լուծումներով շարադրությամբ, որի նպատակն էր «կորուսյալ հայրենիք» արտահայտության ժխտումը: Միտքը ոգեշնչող էր ու ապրեցնող:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ


ՊԱՏՎՈԳԻՐ
ՆԱՐԵԿ ՅԱԿՈԲՅԱՆԻՆ
I


ՊԱՏՎՈԳԻՐ
ՌՈԲԵՐՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ
II


ՊԱՏՎՈԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
III




## ԱՐՀԵՍՏԻ, ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԻՆԹԵԶԸ

2022 թվականի հոկտեմբերի 6-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» և «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտություններով I կուրսերի ուսանողները այցելեցին Ձիթողցոնց՝ ժողովրդական ճարտարապետության, քաղաքային կենցաղի և ազգային ճարտարապետության տուն-թանգարան: Այցելության նպատակն էր բարձրացնել մշակութային միջոցառումներին ուսանողների ներգրավվածությունը, ձևավորել մշակութային հաստատություններ՝ թանգարան, թատրոն, համերգասրահ այցելելու ավանդույթ, զարգացնել գեղարվեստական ճաշակ, ապահովել լայն աշխարհայացքի ձևավորումը:

Մեր կրթօջախը, հավատարիմ մնալով իր առաքելությանն ու սկզբունքներին, կարևորում է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով անձի մտավոր, ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված շարունակական գործընթացը:

Ուսանողները ինքնաբավ էին և տպավորված: Այցելությունը ծառայեց իր նպատակին:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Լուսաբանում




# ԽԱՉԵՐԹ

2022թ. հոկտեմբերի 9-ին՝ ժամը 16:00-ին, Գյումրու Գարեգին Նժդեհի հրապարակից դեպի ՍՈՒՐԲ ՅՈԹ ՎԵՐՔ եկեղեցի, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողական խորհրդի, մանկավարժների և հարյուրավոր քաղաքացիների մասնակցությամբ, ազգային հոգևոր դարձի ու համախմբման հրամայականով, տեղի ունեցավ խաչերթ՝ ի նպաստ հայապահպանության, ազգային արժանապատվության արժևորման:

Կրթօջախի ուսանողությունը գիտակցում էր, որ այսօր փոթորկալից է մեր առօրյան, հոգին և միտքը, իսկ այդ նախաձեռնությունը միտում ուներ խաղաղեցնելու ու խաղաղ հոգով ապրեցնելու մեզ՝ հայերիս: Այսօր քան երբևե պարտավոր ենք մեր մեջ ունենալ Աստծո զորությունը և համախմբվածությամբ պիտի միաբանվել մեկ գաղափարի շուրջ. «Եղել ենք , կանք ու պիտի լինենք»:

Երթն ավարտվեց գիտակից և հավատքով լցված սովորողների հույսի աղոթքով:



## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր

Հայերեն | Français | English



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Հաստատված է մ/մ թիվ 2 նիստում 30 08 2022թ.

Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորման նախագահ՝ Ռ. Պետրոսյան

### Զրույց-քննարկում

/առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների շարքից/

Թեմա՝ «Առողջ սնունդը որպես առողջ ապրելակերպի նախապայման»
Պատասխանատու՝ Զ. Նահապետյան
Անցկացման ամսաթիվը՝ 11.10 2022թ.
Մասնակիցներ՝
«Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» II կուրս
«Ժողովրդական գործ՝ խոհարար» I կուրս

Նպատակը.

- ընդլայնել գիտելիքները «առողջ ապրելակերպ» հասկացության վերաբերյալ,
- կարևորել առողջ սննդի դերը օրգանիզմի բնականոն կենսագործունեության համար:

Վերջնարդյունքները.

Սովորողը կկարողանա.

- ներկայացնել առողջ ապրելակերպի սկզբունքները,
- նկարագրել սննդային բուրգը՝ որպես առողջ սննդակարգի նախապայման,
- վերլուծել «առողջ սնունդ» և «առողջ ապրելակերպ» եզրույթների միջև կապը:

Անհրաժեշտ պարագաներ.

- մատիտային թղթեր,
- գունավոր թղթեր,
- մարկեր գրիչներ,
- էկրան,
- համակարգիչ,
- կլեյ,
- հարցման թերթիկ




## «ԱՌՈՂՋ ՍՆՈՒՆԴԸ ՈՐՊԵՍ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ»

2022 թվականի հոկտեմբերի 11-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց «Առողջ սնունդը որպես առողջ ապրելակերպի նախապայման» թեմայով զրույց-քննարկում՝ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների շարքից: Միջոցառման նպատակն էր ընդլայնել ուսանողների «առողջ ապրելակերպ» հասկացության վերաբերյալ գիտելիքները և կարևորել առողջ սննդի դերը օրգանիզմի բնականոն կենսագործունեության համար:

Օպերատոր համակարգչի մասնագիտության II կուրսի ուսանողները մասնագիտական երկխոսության էին հրավիրել «խոհարար» մասնագիտության I կուրսեցիներին՝ նպատակային վերլուծության արդյունքում «առողջ սնունդ» և «առողջ ապրելակերպ» եզրույթների միջև տրամաբանական կապ վեր հանելու նպատակով: Զրույց-քննարկումը անկաշկանդ ձևով վարեց «օպերատոր համակարգչի» մասնագիտության II կուրսի ուսանողուհի Լուսինե Խաչատրյանը՝ զուգահեռ ցուցադրելով իր կողմից պատրաստած թեմատիկ բովանդակալից սահիկաշարը:

Ուսանողները հմտորեն կարողացան ներկայացնել առողջ ապրելակերպի սկզբունքները՝ նկարագրելով նաև սննդային բուրգը՝ որպես առողջ սննդակարգի նախապայման:

Ներկաները, հաշվի առնելով իրենց տարիքային առանձնահատկությունը, գիտակցեցին, որ ճիշտ կենսակերպ վարելը և սնվելը, ինչպես նաև օրվա կանոնակարգված ռեժիմը առողջ լինելու գրավականն են:

**Պատասխանատու**՝ Զ. Նահապետյան

## Նկարադարան




Տարբեր մարդկանց սննդանյութերի և էներգիայի պահանջը կախված է տարիքից, սեռից, աճի տեմպից (արագությունից), ֆիզիկական ակտիվության մակարդակից, ինչպես նաև որոշ ֆիզիոլոգիական վիճակների (ինչպես օրինակ՝ հղիություն) և հիվանդությունների առկայությունից: Ընդհանուր առմամբ, դեռահասության շրջանում մարմնի արագ աճի և բոլոր օրգանների զարգացման պատճառով բարձրանում է սպիտակուցների և կալորիաների պահանջը:

Այդ իսկ պատճառով սահմանափակող «դիետաները»

խիստ վտանգավոր են դեռահասների համար :

Սննդակարգում պետք է ընդգրկվեն տարբեր մթերքներ:

Միայն սննդակարգի բազմազանության պարագայում

հնարավոր է օրգանիզմն ապահովել

անհրաժեշտ բոլոր նյութերով:



# Ի՞նչ է առողջ ապրելակերպը



Առողջ ապրելակերպը մարդու կենսակերպն է, որն ուղղված է առողջության պահպանմանը, հիվանդությունների կանխարգելմանն ու ընդհանուր առմամբ մարդու օրգանիզմի ամրապնդմանը: Մարդու առողջության 60 %-ը և ավելի կախված է նրա կենսակերպից (սնունդ, սնման ռեժիմ, ֆիզիկական ակտիվություն, սթրեսի մակարդակ, վնասակար սովորություններ և կործանարար վարք):




## «ԱՐՑԱԽԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»

2022 թվականի հոկտեմբերի 19-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, «Արցախի սոցիալական զարգացման ծրագրերի» հիմնադրամի և «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության շրջանակներում կազմակերպեց այցելություն Գյումրու Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի, Մ. Մկրտչյանի տուն-թանգարաններ, Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ, ժողովրդական ճարտարապետության, քաղաքային կենցաղի և ազգային ճարտարապետության թանգարան, ինչպես նաև Գեղագիտական Ազգային Կենտրոնի Գյումրու մասնաճյուղ:
Քաղաքի կենտրոնում գտնվող պատմական ու մշակութային վայր համարվող «մուսաների տները» վկայում էին Գյումրվա առօրյայի, մշակույթի հարուստ պատմական ժառանգության մասին: «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» աշխարհի եզակի պատկերասրահն է, որտեղ պահպանվում է Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի աշխատանքների ամբողջական հավաքածուն: Ուսանողները ծանոթացան նաև Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի, Մ. Մկրտչյանի անձնական իրերին, խնամքով պահպանված ձեռագրերին, տպագիր գործերին և մեզ փոխանցված մշակութային ժառանգությանը:
Կրթօջախի և Արցախից հյուրընկալված թվով 38 ուսանողներ ու վարպետներ ինքնաբավ էին. քանզի այցելությունը գեղագիտական հաճույք պատճառեց սերնդին: Մշակութային ու պատմական արժեք ներկայացնող հայակական ստեղծագործությունների միջոցով այցելուները ծանոթացան հայոց պատմությանը, ինչպես նաև մարդկային մշակույթի ու պատմության վերաբերյալ դասեր քաղեցին:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ














## ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 19-ին՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, «Արցախի սոցիալական զարգացման ծրագրերի» հիմնադրամի և «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության շրջանակներում՝ ֆրանսիական Օվրը Դօղիան կազմակերպության աջակցությամբ, անցկացրեցին «Ստորջրյա հնագիտության պատմությունը և դրա զարգացման անհրաժեշտությունը Հայաստանում» թեմայով սեմինար: Այն վարում էր հմուտ լրագրող Աննա Մարտիկյանը: Սեմինարավարի կողմից պատկերավոր ձևով ներկայացվեց ստորջրյա առևտրային նավագնացությունների և ջրասույզ ժառանգության մասին բովանդակալից տեղեկատվություն: Առավել հետաքրքիր էին Կիլիկյան Հայաստանի և Սևանա լճի ստորջրյա հնագիտական պեղումները վկայակոչող տեսանյութերը: Հնագետ ջրասույզի կողմից ցուցադրվեցին լուսանկարներ՝ հայկական գրերի, զանազան զարդանախշերով տապանաքարերի նմուշների, հուշարձանների, բերդերի ու ամրոցների վերաբերյալ, որոնք լուռ վկայությունն էին հայկական ջրային ստորջրյա ժառանգության:

Ուսանողները հետաքրքրված էին. բարձրաձայնվեցին թեմային վերաբերող և ներկաներին հուզող բազմաբովանդակ հարցեր:

Կրթօջախի և Արցախից հյուրընկալած ուսանողները տպավորված էին, քանզի երիտասարդ սերնդի ընդհանուր զարգացմանը միտված սեմինարի կազմակերպումը ծառայեց իր նպատակին:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ


L'Œuvre d'Orient





## Լուսաբանում




# «ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ»

2022 թվականի հոկտեմբերի 20-ին անցկացվեց «Կարիերայի ուղղորդման կենտրոնի գործառույթները» և «Հարցազրույցին ներկայանալու հմտություններ» թեմաներով նպատակային սեմինար՝ «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի սոցիալական զարգացման ծրագրերի» հիմնադրամի, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի և «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի համագործակցությամբ:

Սեմինար պարապմունքին մասնակցում էին կրթօջախի առաջին կուրսեցիները և Արցախից ժամանած տարբեր մասնագիտության երիտասարդ ուսանողներ: Սեմինարը համատեղ վարում էին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ.Ղարագյոզյանը և Զեռներեցություն մոդուլ դասավանդող դասախոս Ռ.Պետրոսյանը՝ հետաքրքրաշարժ սահիկաշարի և տեսանյութերի ցուցադրությամբ: Մասնագիտությամբ կողմնորոշված ուսանողների հետ քննարկվեցին «Գործատուին պատշաճ ձևով ներկայանալու հմտություններ», «Ինչպե՞ս պատրաստվել հարցազրույցի», «Ի՞նչ է աշխատաշուկան» և այլ թեմաները: Հարցերի տեղատարափով ավարտվեց մասնագիտական սեմինարը և տրամաբանորեն միմյանց հետ շաղկապված թեմաները ուսուցողական էին:

Փոխտնօրեն Ա.Մկրտչյանը արցախցի հյուրերին մանրակրկիտ ներկայացրեց կրթօջախում գործող սոցիալական ձեռնարկությունների դերը և ծավալած գործունեությունը, գաղափարը բիզնեսի վերածելու փորձը: Հետաքրքիր երկխոսություն ծավալվեց «բիզնես գաղափար» թեմայի շուրջ՝ երիտասարդ սովորողների միջև: Ուսանողական կազմակերպության անդամները, իբրև ապագա գործարարներ, յուրովի ձևով հանդես եկան և արհեստավարժորեն ներկայացրին աշխատանքի վրա հիմնված ուսուցման առավելությունները:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ










## ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ « Ի՞ՆՉ, ՈՐՏԵ՞Ղ, Ե՞ՐԲ...»

2022 թվականի հոկտեմբերի 21-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի, «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, «Արցախի սոցիալական զարգացման ծրագրեր» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցության շրջանակներում անցկացվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ...» ինտելեկտուալ խաղ-մրցույթ ուսումնարանի և Արցախից հյուրընկալած ուսանողների միջև: Միջոցառման նպատակն էր ապահովել դեռա-հաս սերնդակիցների նպատակային ժամանցը, զարգացնել թիմային աշխատանքի, արագ կողմնորոշվելու, որոշում կայացնելու կարողություններ, նպաստել սովորողների ընդհանուր ինտելեկտուալ զարգացմանը: Մրցույթը վարում էր Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի մաթեմատիկայի դասախոս Ռ.Պետրոսյանը: Երկու փուլով իրականացված խաղ-մրցույթին մասնակցում էին երեք հավաքական թիմեր՝ «Նեմեսիս», «Հորիզոն», «Գիտուններ»:

Հայաստան աշխարհի «հենասյուն երիտասարդները» մեծ ոգևորությամբ պատասխանեցին խաղավարի կողմից առաջադրված հարցերին, իսկ ընկե-րական ջերմ մթնոլորտը վկայությունն էր ձևավորված Արցախ-Հայաստան ամուր կապերի:

Առաջին պատվավոր տեղ զբաղեցրեց «Հորիզոն» թիմը, որը հնադես եկավ գիտելիքները խորը պաշարով: Երկրորդ տեղ գրավեց «Գիտուններ» թիմը, իսկ երրորդ «Նեմեսիս» թիմը:

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ











## Ծրագիր



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկված է ընդհանուրմասնագիտական մեթոդմիավորման 30.09 2022թ. ի թիվ 01 նիստում
Ընդհանուրմասնագիտական մեթոդմիավորման նախագահ ______ Ռ.Պետրոսյան

### Վոլեյբոլի մրցաշար

/առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման,
ծխախոտի ծխի վնասակար ազդեցության,
ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ
հանրային իրազեկման միջոցառումների շարքից/

Անցկացման ժամկետ՝ 25 նոյեմբերի 2022թ.
Վայրը՝ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

Նպատակը.

- ապահովել ուսանողների զբաղվածությունը,
- կազմակերպել ուսումնարանի հավաքական թիմ,
- ձևավորել թիմային աշխատանքի կարողություններ,
- խթանել հետաքրքրություն վոլեյբոլի նկատմամբ,
- զարգացնել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- դրսևորել տեխնիկական և տակտիկական գործողությունների ստեղծագործական կիրառում,
- կարողանալ տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, համագործակցել,
- ունենալ բավարար ֆիզիկական պատրաստվածություն,
- կարողանալ հանդես բերել ինքնավստահություն և հանդուրժողականություն:

Ընթացքը.
Նախապատրաստական աշխատանքներ.

- վոլեյբոլի պարապմունքների անցկացում,
- մրցույթի թիմերի համալրում,
- մրցակարգի մշակում /օլիմպիական մրցակարգ/,
- վիճակահանության անցկացում,
- պատվոգրերի պատրաստում:

Մրցույթի անցկացում

- մրցույթի մասնակից թիմերի ներկայացում,
- օլիմպիական կանոնակարգի ներկայացում՝ համաձայն վոլեյբոլի կանոնակարգի,
- I, II, III մրցանակային տեղերի զբաղեցում մրցավարի կողմից,
- համապատասխան պատվոգրերի հանձնում,
- հավաքական թիմի կազմավորում:




## ՎՈԼԵՅԲՈԼԻ ՆԵՐՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

Հոկտեմբերի 25-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացվեց վոլեյբոլի ներուսումնարանային մրցաշար՝ «Առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների շարքից»: Կազմակերպիչ՝ ֆիզիկական կուլտուրա և ֆիզկուլտուրա դասավանդող Ն. Սուքիասյան:

Մրցակից թիմերը համաքագրվել են նախապես՝ վիճակահանությամբ:

Մրցաշարն անցկացվեց օլիմպիական սկզբունքով, որին մասնակցեցին համաքական հինգ թիմեր:

Թեժ պայքարի արդյունքում գրանցվեցին հետևյալ արդյունքները:

**1-ին տեղ՝** **«Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ համաքական թիմ**

**2-րդ տեղ՝** **«Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ համաքական թիմ**

**3-րդ տեղ ՝** **«Ոսկերչություն՝ ոսկերիչ» մասնագիտությամբ համաքական թիմ:**

Կազմակերպիչ՝ Ն. Սուքիասյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ










ՊԱՏՎՈԳԻՐ


ՊԱՏՎՈԳԻՐ


ՊԱՏՎՈԳԻՐ

## Ծրագիր



ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկվել է համանիստար մ/մ թիվ 2 նիստում
30.08.2022թ

Մ/Մ նախագահ՝ Բ. Գրիգորյան

### ԲԱՑ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Հայոց լեզու
Անցկացման ժամկետը 31.10 2022թ
Թեմա՝ «Գոյական անուն»ամփոփում
Կուրս՝ «Օպերատոր համակարգչի» II կուրս
Դասավանդող՝ Բ. Գրիգորյան
Դասի նպատակը՝
ամրապնդել «Գոյական անուն» թեմայի շուրջ ձեռք բերած գիտելիքները․
✓ <Գոյական>-ի խոսքի մասային առանձնահատկությունները,
✓ գոյականի հոլովները, սեռական հոլովի կազմության եղանակները,
✓ հոլովների շարահյուսական պաշտոնը, ոճական արժեքը:
Դասի կահավորումը՝ սահիկաշար <Գոյականի հոլովները՝ սեռական հոլով>, տեսադաս, գծապատկեր, քարտեր
Վերջնարդյունք
Ուսանողը պետք է;
ա/ գիտենա և կարողանա տարբերել գոյականի հոլովները,
բ/ իմանա սեռական հոլովի կազմության եղանակները,
գ /կարողանա նախադասության մեջ որոշել հոլովների շարահյուսական պաշտոնը, ոճական արժեքը:

Դասի ընթացքը
1. Սխեմատիկ գծապատկերի միջոցով ուսանողները ներկայացնում են գոյականի հատկանիշները․
- ✓ տեսակ՝ անձ, իր
- ✓ տեսակ՝ հասարակ, հատուկ
- ✓ թիվ՝ եզակի, հոգնակի
- ✓ առում՝ որոշյալ, անորոշ
- ✓ հոլով

2. Տեսադասի միջոցով ուսանողները ներկայացնում են գոյականի հոլովները, սեռական հոլովը որպես թեք հոլով, բացատրում այս հոլովի կազմության առանձնահատկությունը:




## ԲԱՑ ԴԱՍ՝ «ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ»

2022 թվականի հոկտեմբերի 31-ին «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց «Գոյական անուն» թեմայով ամփոփիչ բաց դաս: Նպատակն էր ամրապնդել թեմայի շուրջ սովորողների ձեռք բերած գիտելիքները, կարողանալ կատարել շարահյուսական վերլուծություններ, իմանալ գոյականի ոճական արժեքը գեղարվեստական գրականության մեջ՝ գրագետ օգտագործելով բանավոր և գրավոր խոսքում:

Ինքնատիպ և տրամադրող էր դասի կահավորումը. ուսանողների կողմից ստեղծված գծապատկերային պաստառը, թեմատիկ հագեցած սահիկաշարը և տեսանյութը խթանեցին սովորողների համապարփակ գիտելիքների ներկայացումը և բանավոր խոսքին:

Թեմայի ամփոփ ներկայացումից հետո դասավանդողի կողմից տրվեց գոյականի հատկանիշները որոշող առաջադրանք: Սովորողները հմտորեն կարողացան ներկայացնել գոյականի ոչ միայն քերականական, այլ՝ գրականագիտական հատկանիշները:

Ընթացքում լսարանը ունկնդրեց Հ. Սահյանի և Վ. Տերյանի ստեղծագործությունները՝ Ս. Ցուզբաշյանի անզուգական կատարմամբ:

Դասը հասավ իր տրամաբանական ավարտին, երբ ուսանողուհի Լուսինե Խաչատրյանը հանդես եկավ իր անակնկալ նախաձեռնությամբ՝ ընթերցելով «գոյական» անվանը համապատասխան աքրոստիկոսը:

Պատասխանատու՝ Ք. Գրիգորյան

## Նկարադարան


ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՊՈԱԿ






ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ,
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ
Գոյականի ամեն մի փոփոխված ձև կոչվում է հոլով, իսկ ձևափոխությունների ամբողջությունը՝ հոլովում:



## Ծրագիր

Հայերեն | Русский | English

ՀՀ ԿԳՄՍՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՊՈԱԿ



Մեր Մասին | Կրթություն | Դիմորդ | Ուս. խորհուրդ | Նորմեր | Իրավական ակտեր | Ծրագրեր | Կապ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Քննարկվել է հավանության մեթոդմիավորման
«30» 08 2022թ.-ի թիվ 2 նիստում
Նախագահ՝ Ք. Գրիգորյան

**Պլան**
**«Գենդերային կարծրատիպեր»**
**թեմայով զեկույց-քննարկման**

**Մասնակիցներ՝** Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի I կուրսի ուսանողներ

**Անցկացման վայր և ժամանակ** 3.11.2022թ
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Նպատակ
- Ներկայացնել գենդերային հավասարության դերն ու նշանակությունը:
- Ներկայացնել գենդերային կարծրատիպերի խորացող խտրականության բացասական ազդեցությունը հասարակության վրա:
- Ներկայացնել գենդերային կարծրատիպերի ներգործությունը անձի կյանքի ողջ ընթացքի վրա:
- Ներկայացնել գենդերային կարծրատիպերով պայմանավորված քաղաքացու հասարակական գիտակցական ակտիվությունը:

Ընթացք
- ➢ Զեկույց- սահիկաշար՝ «Գենդերային կարծրատիպեր»
- ➢ Բանավեճ, թեստավորում

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

1. «Ի՞նչ է անկախությունը»
2. «Իգական և արական սեռով պայմանավորված անձի հոգեբանական նկարագրի գնահատում.
- ✓ աշխատասիրություն,
- ✓ ներողամտություն,
- ✓ կամայականություն,
- ✓ համագործակցություն,
- ✓ պատասխանատվություն

Ակնկալվող արդյունք

Գենդերային հավասարության դերն ու նշանակությունը կարևորող, արժևորող, կարծրատիպերի դեմ խտրականությամբ պայմանավորված՝ հասարակական բացասական երևույթների նկատմամբ մերժողական գիտակցությամբ օժտված ուսանողներ:

Զեկուցող՝ Մ. Ավետիսյան

## Լուսաբանում




### «Կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցություն և հավասար հնարավորությունների ընդլայնում» ծրագրի շրջանակում կազմակերպված զեկույց քննարկման

2022 թվականի նոյեմբերի 4-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի առաջին կուրսեցիների մասնակցությամբ, անցկացվեց «Գենդերային կարծրատիպեր» թեմայով զեկույց-քննարկում:

Միջոցառման նպատակն էր ուսանողներին ծանոթացնել «գենդեր» հասկացությանը, իրազեկել «գենդերային հավասարություն» եզրույթի, դերերի և կարծրատիպերի մասին:

Ավագ կուրսեցիները ևս իրենց մասնակցությունն ունեցան թեմայի նախապատրաստման աշխատանքներում և պատշաճ ձևով լսարանին ներկայացրին իրենց կողմից ստեղծած ուշագրավ և դիտարժան թեմատիկ սահիկաշար:

Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ առարկայի դասախոս Ս.Ավետիսյանը հանգամանորեն ներկայացրեց «Գենդեր» եզրույթը՝ որպես համաշխարհային մշակութային խոսույթի անբաժան մաս: Զեկուցողը նշեց նաև կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության, հավասար հնարավորությունների ընդլայնման հայեցակետային արդի պահանջները և ելակետերը: Կարևորվեց հասարակության մեջ անհատից ակնկալվող վարքի կոնկրետ ձևերը:

Լսարանն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ սեփական կարծիքների և տեսակետների արտահայտման, մեկնաբանման գործում:

Զեկույց-քննարկման ըստ էության ելույթները գենդերային դերերի ու կարծրատիպերի արագընթաց փոփոխությունների և հետևանքների վերաբերյալ էին:

Թեմայի գերխնդիրը գենդերային կարծրատիպերի և սեռային խտրականության վերացումն էր. ամփոփիչ թեստավորման արդյունքում պարզվեց, որ երիտասարդ սերունդը ըմբռնումով է մոտենում նորօրյա մարտահրավերներին:

Պատասխանատու՝ Ս. Ավետիսյան